ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 166-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿՈՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 02-061-0106-0076 կադաստրային ծածկագիրը կրող 0.3027 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը օտարվել է աճուրդային կարգով, որը համայնքում սահմանված 1 հողաբաժնից (0.66 հա) պակաս է:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 23^1-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^9 և56^1-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Կոշ համայնքի ղեկավար Աշոտ Ենգիբարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **հարյուր հիսուն հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Կոշ համայնքի ղեկավար Աշոտ Ենգիբարյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոշ համայնքի ղեկավար Աշոտ Ենգիբարյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ